Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի դերը Հայաստանում վիրաբուժության զարգացման գործում

Մ. Հերացու անվան ԵրՊԲՀ-ի վիրաբուժության թիվ 1 ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հ. Վ. Սարուխանյան, պրոֆեսոր Մ. Մ. Միրիջանյան

375025 Երևան, Կորյունի 2

Նոր հարյուրամյակում վիրաբուժությունը բժշկության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում բնակչության առողջության պահպանման, նրա վերականգնման և կյանքի որակի բարձրացման գործում:

Վիրաբուժությունը, ինչպես առողջապահությունը ընդհանրապես, անցած հարյուրամյակում մեծ թռիչք ապրեց: Ավելի համոզիչ լինելու համար հարկ է նշել, որ XX դարի սկզբին մեր երկրում բժշկագիտությունը և ազգաբնակչության առողջապահության կազմակերպումը կամ ընդհանրապես չկար, կամ էլ գտնվում էր անասելի ցածր մակարդակի վրա:

Հայաստանն իր պատմության քառուղիներում ունեցել է բժշկության զարգացման տարբեր մակարդակներ: Մատենադարանի ձեռագրերից պարզ է դառնում, որ Ոսկե Միջնադարում Հայաստանում բավականին զարգացած է եղել վիրաբուժական գործը: Կիլիկյան Հայաստանում Մխիթար Հերացին հիմք դրեց գիտական բժշկությանը: Հիշատակումներում նշվում է, որ Կոլոմբոսի արշավախմբում եղել են հայ բժիշկ-վիրաբույժներ: Սակայն ամենից շատ նրանք հիշատակվում են ռուսական բանակում և ռուս արքունիքում: Հատկանշական է պալատական վիրաբույժ, ռուսական բանակի գեներալ, «Գեորգիյան խաչի» ասպետ Ջամբիկ Մարգարյանը, որը ծնունդով Չարդախլուից էր:

Կան տվյալներ, որ XIX դարի կեսերին Գևորգ Երևանցին Հայաստանում կատարել է օստեոսինթեզ ազդրոսկրի կոտրվածքների ժամանակ:

Առաջին դիպլոմավոր բժիշկ-վիրաբույժներից են եղել Մոսկվայի համալսարանի շրջանավարտներ Հ.Հովհաննիսյանը և Տեր-Գրիգորյանը, որոնք Երևանի (1895) և Ալեքսանդրապոլի (1905) քաղաքային 10 մահճակալանոց հիվանդանոցներում սկսել են իրենց գործունեությունը: Նշված բաժանմունքներում էլ ձևավորվեց Հայաստանի ներկայիս հզոր վիրաբուժական ծառայությունը:

Առաջին բժշկական ընկերությունը ձևավորվել է 1910 թ. վիրաբույժ Տեր-Միքայելյանի ջանքերով: Ընկերությունը 1920 թ. հրավիրեց բժիշկների առաջին համահայկական համագումարը:

1920 թ. Հայաստանում աշխատում էին 58 բժիշկներ, որոնցից միայն չորսն էին վիրաբույժներ: Դեռ Հայաստանի առաջին Հանրապետության, ապա Խորհրդային Հայաստանի առաջին տարիներին հրատապ էր բժշկական կադրերի, այդ թվում՝ վիրաբույժների պատրաստման խնդիրը: Այն լուծելու համար անհրաժեշտ էր ունենալ սեփական բժշկական կրթօջախ, քանզի հանրապետությունից դուրս կրթություն ստացան մասնագետների միջոցով հնարավոր չէր լուծել բժիշկների օրեցօր մեծացող պահանջը: Նպատակը իրագործելու համար 1921թ. ստեղծվում է Երևանի բժշկական դպրոցը, որի հիման վրա 1922 թ. մարտին հիմնադրվում է Երևանի պետական համալսարանի բժշկական մասնաճյուղը, որը 1930-ին առանձնացվեց որպես Երևանի բժշկական ինստիտուտ, ապա համալսարան: Վերջինս էլ դարձավ այն ամբակուռ դարբնոցը, որը ստանձնեց կադրերի պատրաստման և վիրաբուժական մտքի զարգացման ազգանվեր գործը: Հետագայում այդ գործում մեծ ավանդ ունեցան *ակադեմիկոս Ավդալբեկյանի անվան բժիշկների կատարելագործման ինստիտուտը, ակադեմիկոս Ֆանարջյանի անվան ռենտգենոլոգիայի, ռադիոլոգիայի և օնկոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտը, ակադեմիկոս Միքայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտը, Պետրոսյանի անվան տրավմատոլոգիայի և օրթոպեդիայի կենտրոնը, էրեբունի, Արմենիա, Մալաթիա, Նորք-Մարաշ, Այրվածքաբանության, Արաբկիր բժշկական կենտրոնները, Մալայանի անվան աչքի հիվանդությունների, Մարգարյանի անվան մանկաբարձության և գինեկոլոգիայի կլինիկաները* և այլ հաստատություններ:

Այդ տարիներին չափազանց մեծ դժվարություններ կային բժշկական ֆակուլտետի աշխատանքի կազմակերպման համար: Բավական է նշել, որ հանրապետությունում որոշ կլինիկական նեղ մասնագիտությունների գծով չկային ստացիոնար բաժանմունքներ, որտեղ ուսանողները հնարավորություն ունենային մասնակցելու հիվանդների ախտորոշման, խնամքի և բուժական աշխատանքներին: Եղած հիվանդանոցներն ու նրանց բաժանմունքները փոքր էին: Ամենամեծ վիրաբուժական բաժանմունքը Հանրապետական թիվ 1 հիվանդանոցում էր, որն ուներ ընդամենը 28 մահճակալ: Տարածքային խնդիրներից բացի բժշկական ֆակուլտետը դասախոսների մեծ կարիք ուներ: Քանի որ սեփական կադրերով անհնարին էր լրացնել ֆակուլտետի պահանջները և դասավանդման որակը բարձրացնել պատշաճ մակարդակի, ֆակուլտետի ղեկավարությունը նամակագրական կապ է հաստատում Խորհրդային Միության այլ վայրերում աշխատող մի խումբ հայ անվանի բժիշկների

ի հետ և հրավիրում նրանց հայրենիք: Հայաստան մշտական աշխատանքի և բնակության են գալիս բազմաթիվ հայ բժիշկներ. Համբարձում Քեչեկը, Խաչատուր Արխիպյանը, Հովնան Գաբրիելյանը, Արտաշես Մելիք-Ադամյանը և ուրիշներ, որոնք աշխատանքի են անցնում բժշկական ֆակուլտետում, մասնավորապես՝ ընդհանուր վիրաբուժության ամբիոնում, որի ղեկավարությունը ստանձնում է Համբարձում Սերաֆիմի Քեչեկը: Գիտության վաստակավոր գործիչ Քեչեկը ծնվել է 1872թ.-ին՝ Դոնի Նախիջևանում, սովորել է Պետերբուրգի, ապա՝ Մոսկվայի բժշկական ֆակուլտետներում: Համալսարանը ավարտելուց հետո 1897թ. աշխատանքի է անցել Ռոստովում, իսկ 1900թ. տեղափոխվել է Պետերբուրգ և աշխատանքի անցել ակադեմիական վիրաբուժական կլինիկայում: 1901 և 1905թթ. նա եղել է արևմտյան Եվրոպայում, որտեղ ուսումնասիրել է միզասեռական օրգանների հիվանդությունները: Տեղափոխվելով Երևան 1923թ., նա նշանակվում է հանրապետական հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքի, ինչպես նաև վիրաբուժության ամբիոնի վարիչ: Դասախոսական կադրերի բացակայության պատճառով որոշ տարիներ նա դասախոսություններ է կարդացել նաև ախտաբանական անատոմիա և ախտաբանական ֆիզիոլոգիա առարկաներից: 1925թ. Հ. Քեչեկը նշանակվել է համալսարանի բժշկական ֆակուլտետի դեկան: Մեծ է Քեչեկի դերը հանրապետությունում գիտական մտքի զարգացման մեջ: Նրա 30-ից ավելի գիտական աշխատանքները նվիրված են մարսողական համակարգի, հենաշարժիչ ապարատի, միզասեռական համակարգի, էխինոկոկոզի և խպիպի պրոբլեմներին: Մեծ է Հ. Քեչեկի ծառայությունը Հայաստանում արյան փոխներարկման գործի ներդրման և կազմակերպման ասպարեզում:

Հ.Ս.Քեչեկի սաներից և նրա գործի շարունակողն էր գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ս. Ս. Շարիմանյանը, որն ուսուցչից հետո 1940թ. ղեկավարեց ամբիոնը շուրջ 30 տարի: Գիտության վաստակավոր գործիչ Սեդրակ Սիմոնի Շարիմանյանը ծնվել է 1898 թ. Թբիլիսիում: 1922 թ. ավարտել է Խարկովի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Մինչև 1925թ. աշխատել է Խարկովի համալսարանի բժշկական ֆակուլտետի հոսպիտալի վիրաբուժական կլինիկայում: 1926 թ., տեղափոխվելով Երևան, աշխատանքի է անցել ֆակուլտետային վիրաբուժության կլինիկայում: 1930-38թթ. նա աշխատել է բժշկական ինստիտուտի ֆակուլտետային վիրաբուժության կլինիկայում որպես ասիստենտ, իսկ այնուհետև՝ նույն ամբիոնի պրոֆեսոր: 1940 թ. նշանակվել է ընդհանուր վիրաբուժության ամբիոնի վարիչ և երկար տարիներ ղեկավարել այն: Պատերազմի տարիներին եղել է նյարդավիրաբուժական էվակոհոսպիտալի գլխավոր վիրաբույժ: Զբաղվել է մարսողական տրակտի վերքերի բուժման պրոբլեմով և իր ուսումնասիրությունները ամփոփել է «Աղիների վերքերն ու նրանց բուժումը» ատենախոսության մեջ: Այդ աշխատության մեջ հեղինակը լրիվ ժխտում է լորձային խցանի բուժիչ դերը: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում հիպերտոնիկ հիվանդության բուժմանը նվիրված նրա աշխատանքները, որոնց արդյունքը հանդիսացավ «Զարկերակային հիպերտոնիայի վիրաբուժական բուժումը» դոկտորական թեզը: 1964 թ. նրա խմբագրությամբ լույս տեսավ «Խպիպը Հայաստանում» ժողովածուն: Այդ աշխատանքը ժխտեց այն թյուր կարծիքը, թե Հայաստանը չի հանդիսանում այդ պաթոլոգիայի էնդեմիկ օջախ: Ս. Ս. Շարիմանյանը հեղինակ է «Ընդհանուր վիրաբուժություն» դասագրքի, երկար տարիներ ղեկավարել է Հայաստանի վիրաբույժների գիտական ընկերությունը, եղել է վիրաբույժների անդրկովկասյան ընկերության նախագահ և համամիութենական ընկերության վարչության անդամ: Ս.Ս.Շարիմանյանը 1957-1988թթ եղել է վիրաբուժական ընկերության անփոփոխ ղեկավարը: Հայաստանում նա Ս.Գ.Զոհրաբյանի և Ս.Ս.Հովհաննիսյանի հետ հիմք դրեցին նյարդային վիրաբուժությանը: Նրա աշակերտները դարձան վիրաբուժական մտքի և գործի անխոնջ մշակները, որոնցից են գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Վ.Հ. Սարուխանյանը, Վ.Ա. Մալխասյանը, Մել-Իսրայելյանը, Ս.Ս. Հովհաննիսյանը: Նրանք Սովետական Միությունում հիմնովին մշակեցին պերիդուրալ անեսթեզիայի կիրառումը, ստամոքսի մասնահատումների ժամանակ գաստրոէնտերոստոմաների նորանոր մեթոդներ, գլխավոր լիմֆատիկ ծորանի դրենավորման եղանակներ և այլն: Հեղինակ են բազմաթիվ գիտական մենագրությունների և դասագրքերի:

Մյուս վիրաբուժական դպրոցի հիմնադիրը դարձավ Կիևի համալսարանի շրջանավարտ Հարությունը Միրզա-Ավագյանը, որը 1924թ. հրավիրվեց Երևան և 1929 կազմակերպեց հոսպիտալ վիրաբուժության ամբիոնը:

Հ.Գ. Սիրզա-Ավագյանը լայն մտահորիզոնի տեր վիրաբույժ էր: Ստամոքսի առաջին մասնահատումը նա կատարել է 1929 թ., իսկ 1930 հաջողությամբ կատարեց վիրահատություն սրտի վրա՝ հեռացնելով սրտամկանից հրազենային գնդակ:

Հայրենական վիրաբուժության զարգացման մեջ իր ուրույն դերն ունի Վազգեն Հովհաննեսի Սարուխանյանը, որը ծնվել է 1910 թ. Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ): 1931 թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը և աշխատանքի անցել ֆակուլտետային վիրաբուժական կլինիկայում՝ որպես օրդինատոր: 2 տարի անց ընդունվել է ասպիրանտուրա, որն ավարտելուց հետո նշանակվել է սկզբում ֆակուլտետային այնուհետև՝ ընդհանուր վիրաբուժության ամբիոնի ասիստենտ: Վ.Հ. Սարուխանյանը զորակոչվել է Կարմիր Բանակ և ղեկավարել է Լենինականի, Երևանի հոսպիտալների վիրաբուժական բաժինները, Հայրենական պատերազմի տարիներին հանդիսացել է էվակոհոսպիտալների առաջավոր վիրաբույժ: 1943թ. զորացրվելով բանակից՝ նա վերադառնում է հայրենի ինստիտուտ և պաշտպանում

թեկնածուական թեզ՝ «Արյան կաթիլային փոխներարկումը» թեմայով: Նա ստեղծեց կաթիլային ներարկման համար սարքավորում, որը կիրառական հատկանիշներով գերազանցում էր գոյություն ունեցող սարքավորումները: Ավելի մեծ է Վ. Հ. Սարուխանյանի «Միջողնային աճառների արտափքումներն ու պատռվածքները» դոկտորական թեզի նշանակությունը: Հայրենական բժշկական գրականության մեջ առաջին անգամ նա նկարագրել է կոնտրաստ նուկլեոգրաֆիայի ավելի անվտանգ մեթոդ, որը մանրակրկիտ կերպով մշակել է փորձարարական եղանակով և կիրառել կլինիկայում: Վ. Հ. Սարուխանյանի կողմից հանրապետությունում մշակվել և կիրառվել է պերիդուրալ անեսթեզիան, առաջին անգամ կատարվել է ստամոքսի մասնահատված հատվածի պլաստիկ փոխարինում աղիքային տրանսպլանտատով՝ ոտիկի վրա: Նրա կողմից հրատարակվել են բազմաթիվ գիտական աշխատություններ, այդ թվում՝ «Դեսմուրգիա» ձեռնարկը և «Մանկական վիրաբուժություն» դասագիրքը: 1963թ. Վ. Հ. Սարուխանյանն արժանացել է գիտության վաստակավոր գործչի կոչմանը:

1936-1951 թթ. հոսպիտալ վիրաբուժության ամբիոնը ղեկավարում էր Նովոռոսիյսկի համալսարանի շրջանավարտ Գասպար Ակիմի Մելքոնյանը, որը Երևան էր եկել 1920թ. Օդեսայից: Նրա անունով է կոչվում վիրաբուժության կլինիկան *Արմենիա* բժշկական կենտրոնում:

1952թ. ամբիոնը և կլինիկան ղեկավարեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ, լենինգրադյան վիրաբուժական դպրոցի ներկայացուցիչ պրոֆեսոր Ի.Ք.Գևորգյանը՝ հանրապետությունում անոթային վիրաբուժության հիմնադիրը: Այս կլինիկայում են մասնագիտացել ճանաչված վիրաբույժներ Ս.Ս. Գալստյանը, Է.Ս.Մարտիկյանը, Գ.Լ.Միրզա-Ավագյանը և շատ ուրիշներ:

Իվան Քրիստափորի Գևորգյանը ծնվել է 1907 թ. Կամոյի շրջանի Կարմիր գյուղում: 1924 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բուժական ֆակուլտետը: Հետագայում ուսումը շարունակել է Լենինգրադում: 1930թ. նա վերադարձել է Հայաստան, որտեղ աշխատանքի է անցել Ալավերդիում, իսկ 1934թ. տեղափոխվել Երևան: Մեկ տարի անց վիրաբուժության գծով ընդունվել է ասպիրանտուրա և մեկնել Խարկով: 1938 թ. Ի. Մ. Գևորգյանը նշանակվել է Երևանի բժշկական ինստիտուտի ֆակուլտետային վիրաբուժության ամբիոնի, իսկ երկու տարի անց՝ ընդհանուր վիրաբուժության ամբիոնի ասիստենտ: Հայրենական պատերազմի տարիներին զորակոչվել է և 1944 թ. ծառայությանը զուգընթաց նշանակվել է բժշկական ինստիտուտի ռազմասանիտարական պատրաստականության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, իսկ այնուհետև՝ ռազմադաշտային վիրաբուժության դասընթացի գծով հոսպիտալ վիրաբուժության ամբիոնի դոցենտ: 1952-79 թթ. Ի. Մ. Գևորգյանը եղել է հոսպիտալ վիրաբուժության ամբիոնի վարիչ: Հեքսենալային ներմկանային անզգայացման հարցի շուրջ նա 1941 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ: Նշանակալից են նրա աշխատանքները դեղանյութերի ներզարկերակային ներմուծման վերաբերյալ: 1952 թ. Ի. Մ. Գևորգյանը պաշտպանել է դոկտորական թեզ՝ «Հիպերտոնիկ լուծույթների ներզարկերակային կիրառման ժամանակ կլինիկափորձարարական դիտարկումներ» թեմայով: Ի. Մ. Գևորգյանը հեղինակ է 200-ից ավել աշխատությունների: Լեղուղիների վիրահատության ժամանակ բակտերիալ բարդությունների կանխման նպատակով նա մշակել և հիմնավորել է դոներակի մեջ դեղանյութերի ներարկման մեծ արդյունավետությունը: Նա նկարագրել է մալարիայի ժամանակ «սուր որովայնի համախտանիշը»: Նա առաջինն էր, որ Հայաստանում ուսումնասիրեց ալվեոլոկոկոզը: 1963 թ. Հռոմում նա ընտրվել է վիրաբույժների ընկերության անդամ:

Ի.Ք. Գևորգյանին հաջորդեց պրոֆեսոր Վ.Թ. Ափոյանը, որը, ղեկավարելով ամբիոնը և կլինիկան, Հայաստանում վիրաբուժական միտքն ու գործը բարձրացրեց առավել բարձր մակարդակի: Մեր ժամանակակից Վիկտոր Թադևոսի Ափոյանը ծնվել է 1930 թ. Թբիլիսիում: 1955 թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը, որից հետո աշխատանքի է անցել Լիպեցկի մարզում: 1957թ. աշխատել է Ալավերդիում: 1964 թ. «Կրծքի օգրանների հիվանդությունների ժամանակ միջոսկրային ֆլեբոգրաֆիան» թեմայով պաշտպանել է թեկնածուական թեզ, իսկ 1971 թ.՝ «Թոքի թարախակույտեր» թեմայով պաշտպանել է դոկտորական դիսերտացիա: Նրա կողմից երկրում առաջին անգամ ուսումնասիրվել և կիրառվել է շնչափողի և բրոնխների միջմաշկային կաթետերիզացիան, ինչպես նաև՝ թարախակույտերի ժամանակ դեղանյութերի ներարտրտալ երկարատև ներարկումները: Նրա ղեկավարությամբ հիշատակության արժանի աշխատանքներ են կատարվել թոքերի, լյարդի, լեղուղիների, կերակրափողի պլաստիկաների, կերակրափողի ախալազիայի վերաբերյալ: Նա 1984-86 թթ. եղել է Առողջապահության նախարարության գլխավոր վիրաբույժը: Նա ԲՈՒՀ-ի վիրաբուժական խորհրդի նախագահն է, վիրաբույժների հայկական ասոցիացիայի նախագահի տեղակալը:

Ներկայումս ամբիոնի ավանդույթները շարունակում և բազմապատկում է ամբիոնի վարիչ պրոֆեսոր Ս.Ս. Հովհաննիսյանը:

Հայաստանում վիրաբուժական մտքի ջատագովներից է եղել պրոֆեսոր Ս.Ն.Գալստյանը: Նա կրկնակի ընտրվել է ԵրՊԲԻ ռեկտոր: Լինելով ընդհանուր վիրաբուժության ամբիոնի վարիչ համախմբել և նոր մակարդակի է բարձրացրել ամբիոնի ավանդույթները:

Այս ամբիոնում է իր գործունեությունը ծավալել գիտության վաստակավոր գործիչ պրոֆեսոր Պ.Պ. Անանիկյանը՝ որպես ամբիոնի վարիչ: Նա Խորհրդային Միությունում առաջինը հիմնադրեց ֆլեբոլոգիայի բաժանմունքը, գիտահետազոտական լաբորատորիան:

Պ.Պ.Անանիկյանը հեղինակ է բազմաթիվ նորարարությունների, գյուտերի, մենագրությունների և դասագրքերի: Նա այսօր էլ ակտիվ վիրաբույժ է և վիրաբուժության մեծ քարոզիչ:

1965 պրոֆեսոր Էմմա Մարտիկյանը հիմնադրեց մանկական վիրաբուժության ամբիոնը, որը հետագայում ղեկավարեցին պրոֆեսորներ Ս.Ա. Վանյանը և Ա.Ս. Բաբլոյանը: Այսօր, հանձինս նրանց մանկական վիրաբուժությունը Հայաստանում կատարելության է հասել: Բավական է նշել, որ այստեղ մեծ հաջողությամբ կատարվում են բարդագույն վիրահատություններ, ընդհուպ մինչև օրգանների փոխպատվաստումը:

Հայաստանի վիրաբուժության հիմնադիրների շարքում իր ուրույն տեղն ունի Ռուբեն Հովսեփի Յոլյանը, որը 1919թ. ավարտել է Կիևի համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1927թ. սկսել է աշխատանքը Երևանի պետական համալսարանի բուժական ֆակուլտետում Միրզա-Ավագյանի ղեկավարությամբ: 1940-1955 թթ. Յոլյանը ղեկավարել է ֆակուլտատիվ վիրաբուժության ամբիոնը, հեղինակ է «Ռազմադաշտային վիրաբուժություն», «Մասնավոր վիրաբուժություն» դասագրքերի: Մեծ է նրա դերը հանրապետությունում հեմատոլոգիայի զարգացման մեջ: Հատկապես մեծ ներդրում ունի նա պարազիտային հիվանդությունների՝ մալարիա, ամիոբիազի վիրաբուժական խնդիրների լուծման գործում: Նա ընտրվել է ՍՍՀՍ բժշկական ակադեմիայի թղթակից անդամ:

Նրա արժանի հետևորդներն են մեծանուն վիրաբույժներ Ս.Ք. Ավդալբեկյանը, Ս.Զ.Հովհաննիսյանը, Հ.Ի. Մինասյանը, Ա.Ա.Միդոյանը:

Մեր պարտքն ենք համարում հիշատակել տաղանդավոր վիրաբույժ ակադեմիկոս Ս.Ք. Ավդալբեկյանի ներդրումը Հայաստանում բժիշկների կատարելագործման ինստիտուտի և կրծքային վիրաբուժության ու անեսթեզիոլոգիայի առաջին ամբիոնի հիմնադրման գործում: Սեծանուն վիրաբույժի սաներից են Վ.Թ. Ափոյանը, Հ.Վ. Սարուխանյանը, Ս.Ս. Քուշկյանը, Դ.Լ. Մելքոնյանը, Զ.Ա. Տեր-Ավետիկյանը, Ա.Ս. Աղաջանյանը և ուրիշներ: Այս դպրոցի ներկայացուցիչներն այսօր իրենց ուսուցչի գործի ակտիվ շարունակողներն են:

Ամբիոնում Յոլյանին հաջորդեց Ռուբեն Պարոնյանը՝ «Մասնավոր վիրաբուժություն» դասագրքի հեղինակը: Այնուհետև ամբիոնը 20 տարուց ավել ղեկավարեց պրոֆեսոր Ս.Զ.Հովհաննիսյանը, որը Հայաստանում պրոկտոլոգիայի հիմնադիրներից է:

Ժամանակակից վիրաբուժության զարգացման, դասավանդման մեջ պետք է արժանին մատուցել Հ.Վ. Սարուխանյանի գործին: Հովհաննես Վազգենի Սարուխանյանը ծնվել է 1938 թ. քաղաք Երևանում՝ անվանի վիրաբույժ Վ. Հ. Սարուխանյանի ընտանիքում: 1955 թ. ընդունվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտ, որն ավարտել է 1961 թ.: 1961-63 թթ. եղել է սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտի վիրաբուժական բաժանմունքի կլինիկական օրդինատոր, ապա աշխատանքի է անցել Երևանի բժիշկների կատարելագործման ինստիտուտում: 1965 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Միոկարդի ներպերիկարդային ռեվասկուլարիզացիայի վիրաբուժական մեթոդների համեմատական գնահատականի մասին» թեմայով, որից հետո մինչ 1979թ. աշխատել է որպես ավագ գիտաշխատող: 1979-88 թթ. Հ. Վ. Սարուխանյանը հանդիսացել է կրծքային վիրաբուժության և անեսթեզիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր: 1969 թ. Հ. Վ. Սարուխանյանը պաշտպանել է դոկտորական թեզ՝ «Դեղանյութերի երկարատև ինֆուզիան ռեգիոնար անոթներով որովայնային խոռոչի օրգանների հիվանդությունների բարդությունների պրոֆիլակտիկայի և բուժման մեջ» թեմայով: 1988 թ. առ այսօր Հ. Վ. Սարուխանյանը ղեկավարում է ԵՊԲՀ վիրաբուժական հիվանդությունների թիվ 1 ամբիոնը: Նա առողջապահության նախարարության գլխավոր վիրաբույժն է, վիրաբույժների ասոցիացիայի նախագահը, ՀՀ ԱՆ լիցենզիոն հանձնաժողովի նախագահը, «Հայկական վիրաբուժություն XXI» պրոֆեսիոնալների միության նախագահը: Հ. Վ. Սարուխանյանը հեղինակ է ավելի քան 200 տպագրված աշխատանքների: Նրա կողմից մշակվել են զույգ թոքերի միանվագ ալոպլաստիկայի յուրատեսակ մոդել, ինչպես նաև՝ ստամոքսի մասնահատման ժամանակ ստամոքս-աղիքային բերանակցման, ենթաստամոքսային գեղձի սուր բորբոքման և անաստամոզիտների բուժման եղանակներ: Նրա անմիջական հսկողությամբ ԽՍՀՄ-ում առաջին անգամ կատարվել է լեղային քարերի լիտոտրիպսիա: Հայաստանում առաջին անգամ նա է կատարել ենթաստամոքսային գեղձի պանկրեատո-գաստրո-դուոդենալ մասնահատում, հեմանգիոմայի ժամանակ լյարդի ձախ բլթի մասնահատում, լոբեկտոմիայի ժամանակ սեպաձև մասնահատում՝ բրոնխի պլաստիկայով, հարվահանաձև գեղձի, արտատեղային ֆեոքրոմոցիտոմայի հեռացում: Կլինիցիստի, գիտնականի, փորձարարի բազմամյա փորձը թույլ է տալիս ժամանակակից բարձր մակարդակի վրա անցկացնել վիրաբուժության դասավանդման գործը: Հ. Վ. Սարուխանյանը բարձր որակավորված վիրաբույժ է, բազմակողմանի զարգացած կլինիցիստ: Նրա հսկողությամբ են մշակվում և ներդրվում ինչպես գործնական, այնպես էլ՝ ուսումնական պրոցեսի մեջ նոր մեթոդներ և եղանակներ: Նա անմիջականորեն կազմակերպել և ղեկավարել է Սպիտակի երկրաշարժի ժամանակ բժշկական աշխատանքը: Նրա կյանքը, աշխատանքային փորձը, դասավանդման ունակությունները, անսպառ ներքին էներգիան վառ օրինակ են հանդիսանում ժամանակակից վիրաբույժների համար, որոնց մի ստվար բանակ ձևավորվել է նրա անմիջական ղեկավարությամբ:

Հայաստանում ուռոլոգիական ծառայության զարգացման գործում մեծ ներդրում ունի դոցենտ Ա.Ա. Միդոյանը: Այսօր նրա գործի շարունակողն է անվանի վիրաբույժ պրոֆեսոր Ի.Գ.Աղաջանյանը, որը ղեկավարում *է Բժիշկների կատարելագործման ազգային ինստիտուտի* ուռոլոգիայի ամբիոնը և ուռոլոգների

ասոցիացիայի նախագահն է:

Հայաստանում տրավմատոլոգիայի և օրթոպեդիայի հիմնադիրն է Քրիստոփոր Հայրապետի Պետրոսյանը, որը 1914 թ. ավարտել է Բորդոյի Համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1928 թ. նա Երևանում կազմավորեց տրավմատոլոգիական բաժանմունք, որի հիման վրա 1946 թ. ձևավորվեց օրթոպեդիայի և վերականգնողական վիրաբուժության ազգային ինստիտուտը, ապա հիմնադրեց օպերատիվ վիրաբուժության ամբիոնը, որի վարիչ այնուհետև ընտրվեց մեծ գիտնական, տաղանդավոր վիրաբույժ պրոֆեսոր Ա.Ջ.Ճաղարյանը: Նա հանրապետությունում սրտային վիրաբուժության նախաձեռնողն է. նրա ատլասները 1957թ. Բրյուսելում արժանացել են միջազգային բարձր պարգևի՝ «Գրան պրի»-ի:

Ք.Հ.Պետրոսյանի արժանի սաներից են պրոֆեսորներ Մուշեղյանը, Օսիպյանը: Ներկայումս կենտրոնը ղեկավարում է հարգարժան պրոֆեսոր Վ.Պ. Այվազյանը, որն առաջինը զբաղվեց արհեստական հոդի էնդոպրոթեզավորմամբ:

Հայաստանում սրտային և անոթային վիրաբուժության զարգացման գործում առանձնահատուկ ներդրում ունի գիտության գործիչ, ակադեմիկոս Ա.Լ. Միքայելյանը: Նա հիմնադրեց վիրաբուժության ինստիտուտը, որը ներկայումս կրում է իր անունը: Այսօր մեծ գիտնականի գործի շարունակողն ու ինստիտուտի տնօրենն է Ազգային Ժողովի պատգամավոր, անվանի վիրաբույժ, պրոֆեսոր Հ.Ա. Թամազյանը:

Սրտային վիրաբուժությունն այսօր Հայաստանում ծաղկում է ապրում հանձինս տաղանդաշատ վիրաբույժ Հրայր Հովակիմյանի ջանքերի շնորհիվ: Նրա կողմից ղեկավարվող Նորք Մարաշի բժշկական կենտրոնը մեր պարծանքն է:

Պոռկտոլոգիայի զարգացումը Հայաստանում կապված է մեծանուն վիրաբույժ, ակադեմիկոս Լ. ՈՒ. Նազարովի անվան հետ, որի ղեկավարությամբ ձևավորվեցին ճանաչված վիրաբույժներ պրոֆեսորներ Աղավելյանը, Հակոբյանը, Մինասյանը և այլոք:

Օնկովիրաբուժությունը այսօր կարևոր տեղ է գրավում բժշկագիտությունում, այդ առումով պարծանքի է արժանի *Բ.Ա. Ֆանարջյանի անվան օնկոլոգիական կենտրոնը*, որը գիտական մտքի զարգացման և կադրերի պատրաստման օջախ է դարձել: Դրանում իր մեծ լուման ունի ՀՀ Ազգային ակադեմիայի թղթակից անդամ, կենտրոնի ղեկավար Ա.Ա. Գալստյանը:

Հանրապետությունում բարձր մակարդակի վրա է գտնվում մանկաբարձությունն ու գինեկոլոգիան շնորհիվ հիմնադիրներ՝ Արեշյանի, Մարգարյանի, Ահարոնովի, նրանց գործի շարունակողներ Ռ.Ա. Աբրահամյանի, Բեգլարյանի, Կ.Բ. Ակունցի, Գ.Գ. Օկոյևի և ուրիշների:

Օտոլարինգոլոգիայի զարգացումը Հայաստանում սերտ կապված է Արծրունու, Հարությունյանի, Նաջարյանի, Շուքուրյանի, Դունայիվիցերի, Նարիմանովի, Ազիզյանի հետ: Նրանց գործը հետագայում շարունակեցին պրոֆեսորներ Խանամիրյանը, Հարությունյանը, Լուսինյանը, Շուքուրյանը և այլոք:

Աչքի հիվանդությունների վիրահատության զարգացման գործում մեծ է Մելիք-Մուսյանի, Մալայևի, Բլավատսկայայի, Միրզա-Ավագյանի ներդրումը: Այսօր նրանց գործը շարունակում են Բարսեղյանը, Մալայանը, Շաքարյանը և ուրիշներ: Նրանց շնորհիվ ծառայությունը առաջընթաց ապրեց աչքի անհետաձգելի վիրաբուժության մեջ:

Հայ վիրաբույժները միշտ էլ եղել են իրենց երկրի ազնիվ քաղաքացիներ: Հայրենական Մեծ Պատերազմի տարիներին նրանք կյանքի են կոչել շատ վիրավորների: Նրանցից շատերը ղեկավարել են բժշկական ծառայությունը: Անձնուրաց, հերոսական գործի համար նրանք արժանացել են կառավարական բարձր պարգևների, շքանշանների և մեդալների:

90-ականներին Հայաստանի Հանրապետությունը կարողացավ հաղթահարել սոցիալ-տնտեսական բարդ խնդիրներ: 1988 թ. Սպիտակի ահեղ երկրաշարժը, այնուհետև Դարաբաղյան պատերազմը խարխլել էին տնտեսությունը, որի հետ միասին տուժել էր նաև առողջապահական գործը: Այդ տարիներին հայ վիրաբույժները գտնվեցին իրենց բարձրության վրա. նրանք պատվով կատարեցին առողջության պահապանի անկյուն դերը:

Վերջին տարիներին Հայաստանի բժշկությունը մեծ թռիչք ապրեց, ստեղծվեցին բժշկական կենտրոններ, զարգացավ վիրաբուժությունը: Բավական է նշել, որ այսօր հանրապետությունում գործում են 30 վիրաբուժական ամբիոններ, 70 բժշկական կենտրոններ: Մենք ապահովված ենք բարձր որակավորում ունեցող մասնագետներով:

Վիրաբուժության կայացման գործում կարևոր նշանակություն ունի անեսթեզիոլոգիան և ինտենսիվ թերապիան, որի զարգացումը հանրապետությունում կապված է Ս.Խ.Ավդալբեկյանի, Վ.Հ.Սարուխանյանի, Վարդանյանի, Անժելովի անվան հետ: Կադրերի պատրաստման և գիտության զարգացման գործում մեծ է նաև ակադեմիկոս Բունիաթյանի, պրոֆեսոր Մխոյանի, Մելքոնյանի դերը:

Հանրապետությունում բարձր մակարդակի վրա է գտնվում ախտորոշիչ ծառայությունը: Շնորհիվ ակադեմիկոս Է.Ս.Գաբրիելյանի՝ նախկին Միությունում առաջինը մեզ մոտ ստեղծվեց «դիագնոստիկա» կենտրոնը, որը խթանեց վիրաբուժության առաջընթացը: այդ դպրոցն անցած բարձրորակ մասնագետներով համալրվեցին նոր ստեղծված բժշկական կենտրոնները:

Բժշկական համալսարանի շրջանավարտներ են ակադեմիկոսներ՝ Ս.Խ.Ավդալբեկյանը, Հ.Մ.Գալստյանը, Ռ.Ա. Աբրահամյանը, Ա. Ադամյանը, Բ. Ալեքյանը, Հ.Հովհաննիսյանը, Ա.Բունիաթյանը և ուրիշներ, պրոֆեսորներ Ռ.Մովսիսյանը, Ռ. Ադամյանը, Հ.Վ.Սարուխանյանը, Վ. Մամիկոնյանը և ուրիշներ, որոնք աշխատում և դասավանդում են ոչ միայն Հայաստանում, այլ նաև արտերկրում:

Բժշկական համալսարանում է գործում ԲՈՒՀ-ի վիրաբուժական խորհուրդը, որտեղ 2000-2005 թվերին վիրաբուժական մասնագիտություններով պաշտպանվել է 19 դոկտորական և 117 թեկնածուական թեզեր:

Տարեկան հանրապետությունում վիրահատվում են 75-85 հազար հիվանդներ:

Անհրաժեշտ է նշել, որ 1957թ-ից Երևանի բժշկական ինստիտուտում սկսեցին սովորել սիրիայի մեր հայրենակիցները, որոնցից մի մասը որպես հետդիպլոմային ուսուցում ընտրել են վիրաբուժությունը:

1985թ. ԵրՊԲՀ-ում ուսումնառել են արտասահմանյան ուսանողներ, որոնց ուսուցումը տարվում է ռուսերենով: Իսկ վերջին տարիներին՝ անգլերեն լեզվով դասավանդման շնորհիվ, հնարավորություն ստեղծվեց ոչ միայն ավելացնել ուսանողների քանակը, այլ հետդիպլոմային ուսուցման ընդունել այլ երկրներում ավարտած ուսանողների: